## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 1/3-01/4882
„30„ 12 2011թ.

ՀՀ, ք. Գյումրի, Վարդանանց hp. 1,
Հեռ. (+374 312), 3-46-05;
Հեռապատճեն (+374 312) 4-87-01;
Կայքը www.Gyumricity.am
Էլ.փոստ- gyumri@gyumri.am

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ Ա.ԳԻՁԻՐՅԱՆԻՆ

*Հարգելի մարզպետ*

Ուղարկվում է Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի սեպտեմբերի 23-ին կայացած N 12 նիստի NN 134 – 151 որոշումները:

Առդիր՝ 27 (քսանյոթ) թերթից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Բ.ԱԼԵՔՍԱՆՈՎ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 10-12
05 01 12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 134 -Ա

## ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի **2011թվականի սեպտեմբերի 14-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» **N 3764-Ա** որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները`

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ
ԿՈՂՄ — ԴԵՄ ՉԿԱ — ՁԵՌՆՊԱՀ՝ ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

Հավելված՝
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ. սեպտեմբերի 23 - ի
N 12 նիստի N 134-Ա_որոշման

# ՑՈՒՑԱԿ

Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ տարածագնահատման գոտին | Ծածկագիրը Մակերեսը՝ քառ.մ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ղուկասյան փող. 4 շարք 7/4<br>9-րդ գոտի | ԱՀ11-0195<br>100.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 400 000<br>չորս հարյուր հազար |
| 2 | Կ.Դեմիրճյան 1 նրբ. 10/3<br>10-րդ գոտի | ԱՀ11-0196<br>329.95 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 990 000<br>ինը հարյուր իննսուն հազար |
| 3 | Կ.Դեմիրճյան 1 նրբ. 10/4<br>10-րդ գոտի | ԱՀ11-0197<br>399.96 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 200 000<br>մեկ միլիոն երկու հարյուր հազար |
| 4 | Կ.Դեմիրճյան 1 նրբ. 10/5<br>10-րդ գոտի | ԱՀ11-0198<br>330.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 990 000<br>ինը հարյուր իննսուն հազար |
| 5 | Կ.Դեմիրճյան 1 նրբ. 10/6<br>10-րդ գոտի | ԱՀ11-0199<br>330.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 990 000<br>ինը հարյուր իննսուն հազար |
| 6 | Ղորղանյան փող. 35/1<br>8-րդ գոտի | ԱՀ11-0200<br>46.8 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 250 000<br>երկու հարյուր հիսուն հազար |
| 7 | Ա.Խաչատրյան փող. 4/5<br>10-րդ գոտի | ԱՀ11-0201<br>256.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 720 000<br>յոթ հարյուր քսան հազար |
| 8 | Ա.Խաչատրյան փող. 4/13<br>10-րդ գոտի | ԱՀ11-0202<br>90.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 250 000<br>երկու հարյուր հիսուն հազար |
| 9 | Ղուկասյան փող. 161/2<br>9-րդ գոտի | ԱՀ11-0203<br>173.38 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 700 000<br>յոթ հարյուր հազար |
| 10 | Տիգրան Մեծի փող. 38/5<br>8-րդ գոտի | ԱՀ11-0177<br>39.28 | բնակավայրերի խառը կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 250 000<br>երկու հարյուր հիսուն հազար |
| 11 | Արագած 2 թաղ. 6/4<br>11-րդ գոտի | ԱՀ11-0205<br>530.1 | բնակավայրերի խառը կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 800 000<br>ութ հարյուր հազար |
| 12 | Սարոխանյան փող. 6/5<br>11-րդ գոտի | ԱՀ11-0174<br>128.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 300 000<br>երեք հարյուր հազար |
| 13 | Շառա Տալյան փող. 11/7<br>9-րդ գոտի | ԱՀ11-0155<br>360.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 250 000<br>մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար |

**Քաղաքաշինության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժնի պետ** **Ռ.Հակոբջանյան**

Կատարող՝
Վ.Շախոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 135 -Ա

### «ՄՈՒՇ-2» ԹԱՂԱՄԱՍԻ N 2-2Գ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 59.73ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲԱՑՎԱԾՔԻ (ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ) ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, (սեփականության վկայական 1139498) «Մուշ-2» թաղամասի N 2-2գ շենքի առաջին հարկի 59.73քմ մակերեսով բացվածքը (ոչ բնակելի տարածքը) մնացել է ազատ և ներկայումս չի ծառայում իր նպատակային նշանակությանը:

Տարածքը գնելու, նորմալ տեսքի բերելու և տարբեր նշանակության օգտագործելու համար ստացվել են առաջարկներ:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող «Մուշ-2» թաղամասի N 2-2գ շենքի առաջին հարկի 59.73քմ մակերեսով բացվածքը (ոչ բնակելի տարածք), օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 2011թվականի սեպտեմբերի 7-ի N 76 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, 59.73քմ մակերեսով բացվածքի համար օտարման մեկնարկային գին սահմանել 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:
3. Բացվածքի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| Հ.ՊՈՂՈՍՅԱՆ | ՉԿԱ | ՉԿԱ |
| Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ | | |
| Գ.ԱԴԱՄՅԱՆ | | |
| Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ | | |
| Մ.ՍԱՀԱԿՅԱՆ | | |
| Տ.ՓԱՆՈՍՅԱՆ | | |
| Ա.ԲԱԴԵՅԱՆ | | |
| Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | |

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 136 -Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ի N 127-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի օգոստոսի 20-ի N 127-Ա որոշմամբ Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Հ.Սարգսյան փողոցի 4-րդ նրբանցքի N 7/1 հասցեագրությամբ շինությունն անհատույց ժամանակավոր օգտագործման է տրամադրվել «Երկրապահ կամավորների միություն» հասարակական կազմակերպությանը, որից հետո ըստ պայմանավորվածության այն նվիրաբերվելու է:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Չեղյալ ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի օգոստոսի 20-ի «Երկրապահ կամավորների միություն» հասարակական կազմակերպությանը շինությունն անհատույց օգտագործման տրամադրելու մասին» N 127-Ա որոշումը:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 137 -Ա

## Հ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 7/2 ՀԱՍՑԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, Հ.Սարգսյան փողոցի 4-րդ նրբանցքի N 7/1 հասցեի վարչական շենքը Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010թ. նոյեմբերի 8-ի N 200-Ա որոշմամբ թույլատրվել է օտարել աճուրդային եղանակով, որը չի օտարվել հայտեր չներկայացնելու պատճառով:

Կարիքն առաջանալու կապակցությամբ օբյեկտը բաժանվել է երկու մասի՝ Հ.Սարգսյան փողոցի 4-րդ նրբանցքի N 7/1 և N 7/2 հասցեներով: N 7/1 հասցեի հատվածը ներկայումս օգտագործվում է, իսկ N 7/2 հասցեի 179.37քմ մակերեսով հատվածը (սեփականության վկայական 2843028) իր զբաղեցրած 596.27քմ հողամասով ազատ է և չի օգտագործվում:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010թվականի նոյեմբերի 8-ի «Հ.Սարգսյան փողոցի 4-րդ նրբանցքի N 7/1 հասցեի վարչական շենքի օտարման մասին» N 200-Ա որոշումը:
2. Թույլատրել Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Հ.Սարգսյան փողոցի 4-րդ նրբանցքի N 7/2 հասցեի 179.37քմ մակերեսով վարչական շենքն իր զբաղեցրած 596.27քմ հողամասով օտարել աճուրդային եղանակով:
3. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 2011թ. սեպտեմբերի 9-ի N 77 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, 179.37քմ մակերեսով շինության համար օտարման մեկնարկային գին սահմանել **4 800 000 (չորս միլիոն ութ հարյուր հազար)** դրամ, իսկ 596.27քմ հողամասի համար **3 300 000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) դրամ:**
4. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«__23__» __սեպտեմբերի__ 2011թ. Արձանագրություն N __12__

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N __138 -Ա__

## «ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետը և ավագանին կարևորում են Գյումրու համայնքում «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության գործունեությունը, Գյումրու քաղաքապետի և ավագանու հետ համատեղ սոցիալական, կրթական, դաստիարակչական, հայրենասիրական ծրագրերի իրականացումը, երիտասարդության ազգային ռազմա-հայրենասիրական դաստիարակության ոլորտում կազմակերպության դերը և նշանակությունը:

Կազմակերպության համար աշխատանքային պատշաճ պայմաններ ստեղծելու նպատակով և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 605-րդ հոդվածով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Հ.Սարգսյան փող. 4-րդ նրբանցքի N 7/1 հասցեի 277.19քմ մակերեսով վարչական շենքը (սեփականության վկայական 2843029) իր զբաղեցրած 731.99քմ հողամասով նվիրաբերել «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը:
2. Հ.Սարգսյան փող. 4-րդ նրբանցքի N 7/1 հասցեի վարչական շենքը «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը նվիրաբերվում է Շիրակի մարզային և Գյումրու քաղաքային ստորաբաժանումների կողմից՝ գրասենյակ օգտագործելու նպատակով:
3. Նվիրաբերություն ստացողը, նվիրաբերած գույքն առանց նվիրաբերողի համաձայնության, այլ նպատակով օգտագործելու կամ նվիրաբերողի սահմանած նշանակությունը փոփոխելու դեպքում՝ նվիրաբերողը իրավունք ունի պահանջելու նվիրաբերության վերացում:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«23» սեպտեմբերի 2011թ.

ք.Գյումրի

Արձանագրություն N 12

# ՈՐՈՇՈՒՄ N 139 -Ա

## «ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ» ՓՈՂՈՑ N 6/18 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, Խրիմյան Հայրիկ փողոցի N 6/18 հասցեի 192.83քմ մակերեսով բնակելի տունը (սեփականության վկայական 2826058) 1988թ. երկրաշարժից վնասվել է և երկար տարիներ չօգտագործվելով հայտնվել է վթարային վիճակում: Վերականգնման և բնակեցման պիտանի դարձնելու համար անհրաժեշտ են ֆինանսական բավականին միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Խրիմյան Հայրիկ փողոցի N 6/18 հասցեի 192.83քմ մակերեսով բնակելի տունը իր ընդհանուր բաժնային սեփականության 120.01քմ հողամասով օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 2011թվականի սեպտեմբերի 17-ի N 78 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, 192.83քմ մակերեսով բնակելի տան համար օտարման մեկնարկային գին սահմանել **4 850 000 (չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար) դրամ**, իսկ 120.01քմ հողամասի համար ելնելով հողամասի կադաստրային արժեքից **150 000 (մեկ հարյուր հիսուն հազար ) դրամ**:
3. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.

ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 140 -Ա

### «ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ» ՓՈՂՈՑ N 6/19 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, Խրիմյան Հայրիկ փողոցի N 6/19 հասցեի 64.96քմ մակերեսով բնակելի տունը (սեփականության վկայական 2826059) 1988թ. երկրաշարժից վնասվել է և երկար տարիներ չօգտագործվելով հայտնվել է վթարային վիճակում: Վերականգնման և բնակեցման պիտանի դարձնելու համար անհրաժեշտ են ֆինանսական բավականին միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Խրիմյան Հայրիկ փողոցի N 6/19 հասցեի 64.96քմ մակերեսով բնակելի տունը իր ընդհանուր բաժնային սեփականության 40.42քմ հողամասով օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 2011թվականի սեպտեմբերի 17-ի N 79 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, 64.96քմ մակերեսով բնակելի տան համար օտարման մեկնարկային գին սահմանել **1 700 000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) դրամ**, իսկ 40.42քմ հողամասի համար ելնելով հողամասի կադաստրային արժեքից **50 202 (հիսուն հազար երկու հարյուր երկու) դրամ**:
3. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| Հ.ՊՈՂՈՍՅԱՆ | ՉԿԱ | ՉԿԱ |
| Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ | | |
| Գ.ԱԴԱՄՅԱՆ | | |
| Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ | | |
| Մ.ՍԱՀԱԿՅԱՆ | | |
| Տ.ՓԱՆՈՍՅԱՆ | | |
| Ա.ԲԱԴԵՅԱՆ | | |
| Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | |

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«__23__» _սեպտեմբերի_ 2011թ.

ք.Գյումրի

Արձանագրություն N _12_

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N _141 -Ա_

### «ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ» ՓՈՂՈՑ N 6/17 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, Խրիմյան Հայրիկ փողոցի N 6/17 հասցեի 239.12քմ մակերեսով բնակելի տունը (սեփականության վկայական 2826057) 1988թ. երկրաշարժից վնասվել է և երկար տարիներ չօգտագործվելով հայտնվել է վթարային վիճակում: Վերականգնման և բնակեցման պիտանի դարձնելու համար անհրաժեշտ են ֆինանսական բավականին միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է՝

1. Թույլատրել Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Խրիմյան Հայրիկ փողոցի N 6/17 հասցեի 239.12քմ մակերեսով բնակելի տունը իր ընդհանուր բաժնային սեփականության 148.82քմ հողամասով օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 2011թվականի սեպտեմբերի 22-ի N 80 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, 239.12քմ մակերեսով բնակելի տան համար օտարման մեկնարկային գին սահմանել **5 600 000 (հինգ միլիոն վեց հարյուր հազար)** դրամ, իսկ 148.82քմ հողամասի համար ելնելով հողամասի կադաստրային արժեքից 185 000 (մեկ **հարյուր ութսունհինգ հազար)** դրամ:
3. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.

ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

«23» սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 142 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքը Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ սահմանված կարգով ներքոհիշյալ շինությունների նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք, որոնք ենթարկվել են պետական գրանցման:

Նկատի ունենալով, որ նշված շինությունների նկատմամբ պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջները՝ շինությունները ուղղակի վաճառքի միջոցով օտարվելու են տվյալ շինությունները կառուցողներին՝

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Թույլատրել ուղղակի վաճառքի միջոցով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները /հողամասերը/ տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:
2. Շինությունների և հողամասերի օտարման գները սահմանել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ սահմանված գների:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

Հավելված
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ. սեպտեմբերի 23-ի
N 142-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

Ուղղակի վաճառքի միջոցով օտարվող համայնքային սեփականություն հանդիսացող շինությունների /հողամասերի/

| N | հասցե | շինությունը կառուցողի անուն ազգանուն |
|---|---|---|
| 1 | Եսայան փողոց N 31/5 | Արշալույս Ավդալյան և Անահիտ Մարտիրոսյան |
| 2 | Շիրակացու փողոց ԴՈՍ N 10/12 | Օֆիկ, Զվարդ Մկրտչյաններ և Զոհրաբ, Անժելա Նազարյաններ |

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ
ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատ. Պ.Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ու Մ N 143 - Ա

## ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի » 81-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի «Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը և Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագիծը հաստատելու մասին» N 295-Ն որոշումը և Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետական բաժնի կողմից ներկայացված հողամասերի սխեմաներն ու ելակետային տվյալները՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

Հաստատել՝ մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասի մեկնարկային գինը համաձայն հավելվածի

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

Հավելված
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011 թվականի սեպտեմբերի 23 -ի
N 143-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի մեկնարկային գների

| N | Հողամասի հասցեն և գոտիականությունը | ծածկագիրը մակերեսը /քառ.մ/ | Հողամասի օգտագործման նպատակը | վարձավճարի մեկնարկային արժեքը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Սայաթ-Նովայի փող. N 6/7 VIII գոտի | Մ11-15 1952,0 | բարեկարգում, կանաչապատում, ատրակցիոն խաղերի տեղադրում | 100 000 /մեկ հարյուր հազար/ |

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատ. Հ. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 144 - Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ - Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ մասով՝ Գյումրու քաղաքապետարանի «Արամ Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու նպատակով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համաձայնություն տալ՝ Գյումրու քաղաքապետարանի «Արամ Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու **Հովհաննես Մելիքսեթի Մկրտչյանին**:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ
Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ
Գ.ԱԴԱՄՅԱՆ
Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Մ.ՍԱՀԱԿՅԱՆ
Տ.ՓԱՆՈՍՅԱՆ
Ա.ԲԱԴԵՅԱՆ
Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

---

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 145 -Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՉՀԱՇՎԱՌՎԱԾ ԼԵՎՈՆ ՄԱԴՈՅԱՆ (ՆԱԽԿԻՆ ՖՐՈՒՆԶԵ) ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 53, ՂՈՐՂԱՆՅԱՆ 352 ԵՎ ՍԵՎԵՐՍԿԻ ԹԱՂ. ԴՈՍ 96/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի քաղաքի տարածքում գտնվող Լևոն Մադոյան փողոցի թիվ 53, Ղորղանյան 352 և Սևերսկի թաղ. ԴՈՍ 96/3 հասցեներով շինությունները մինչև օրս չեն գտնվում քաղաքապետարանի համայնքի հաշվեկշռում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 48-րդ և 49-րդ հոդվածներով՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրի քաղաքի տարածքում գտնվող և քաղաքապետարանի հաշվեկշռում չհաշվառված Լևոն Մադոյան փողոցի թիվ 53, Ղորղանյան 352 և Սևերսկի թաղ. ԴՈՍ 96/3 հասցեներում գտնվող շինություններն ընդգրկել քաղաքապետարանի հաշվեկշռում:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
| --- | --- | --- |
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.

ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 146 -Ա

## ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 14 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 14 անձիք դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով դիմումները՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թվով 14 անձանց՝ ցուցակը համաձայն հավելվածի Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել ընդամենը 565000 /հինգ հարյուր վաթսունհինգ հազար / դրամ օգնություն:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.

ք. Գյումրի

Հավելված՝
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ. սեպտեմբերի 28-ի
N 12 նիստի N 146-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

Սոցիալապես անապահով՝ թվով 14 անձանց

| | Անուն,Ազգանուն | Հասցե | Գումար /դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | Գեղեցիկ Գևորգյան | Սավոյան 227/269տնակ | 70000 |
| 2. | Գոհար Նավասարդյան | Արովյան 171 տ. | 40000 |
| 3. | Ռոբերտ Գասպարյան | Պռոշյան 18տ. | 50000 |
| 4. | Սահականուշ Խաչատրյան | Տերյան փող.73տ. | 100000 |
| 5. | Մարիետա Քեշիշյան | Պ. Սևակ 15շրն16 | 30000 |
| 6. | Ելենա Սարգսյան | Կոշտոյան 232/003տն | 40000 |
| 7. | Սոնինկա Հովհաննիսյան | Սվերդլովի 187տ. | 30000 |
| 8. | Եվգենիյա Սարգսյան | Կամո 38ա . 46 բն. | 15000 |
| 9. | Վարդուշ Անդրեասյան | Պռոշյան 16տ. | 40000 |
| 10. | Մարինե Մալխասյան | Մ. Մատնիշյան | 25000 |
| 11. | Կիմա Բաղդյան | Կատովսկի փող.7տուն | 30000 |
| 12. | Սուսաննա Գևորգյան | Անտառավան 232/092 | 40000 |
| 13. | Գրիգոր Եղիազարյան | Անտառավան 3րդ 25շ 44բն. | 30000 |
| 14. | Լիլիթ Գալստյան | Հաղթանակի պող . 106/330 | 25000 |
| | Ընդամենը | | 565000 |

ՖԻՆ.ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Մ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 147 - Ա

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով, 32-րդ հոդվածի 4-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ներքոհիշյալ փոփոխությունները և լրացումները կատարելու նպատակով՝

1. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հետևյալ պաշտոնը կրճատել՝
   1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման՝ սոցիալական ծառայությունների Գյումրի-1 տարածքային բաժնի 2-րդ կարգի մասնագետ /**ծածկագիր 3.3-1/**,
   2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ /**ծածկագիր 2.3-70/**,
   3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետ /**ծածկագիր 3.1-51/**:

2. ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում ավելացնել հետևյալ պաշտոնները՝
   1) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի տեղակալ:
   2) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ճարտարապետական բաժնի պետի տեղակալ:
   3) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ:
   4) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ:
   5) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ:
   6) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ճարտարապետական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոն:
   7) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ճարտարապետական բաժնի գլխավոր մասնագետ:

8) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ:

9) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ:

10) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ճարտարապետական բաժնի առաջատար մասնագետ:

11) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ճարտարապետական բաժնի առաջատար մասնագետ:

12) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժնի առաջատար մասնագետ:

13) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ:

14) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ:

15) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ:

16) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ:

17) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ:

18) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնի առաջատար մասնագետ:

19) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ճարտարապետական բաժնի 1-ին կարգի մասնագետ:

3. Հաստատել ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

4. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 16-ի «Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 231-Ա որոշման 1-ին կետը:

5. Սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերն ուժի մեջ են մտնում Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու
2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 147 -Ա որոշման

# ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 577,
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

## <u>ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ</u>

| հ/հ | Պաշտոնը | Միավորների թիվը | Պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ) | ամսական (հազ. դրամ) | տարեկան (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 270,0 | 270.0 | 3240.0 |
| | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 2 | 216.0 | 432.0 | 5184.0 |
| 3 | Համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 5 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 170.0 | 170.0 | 2040.0 |
| 6 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | 1 | 160.0 | 160.0 | 1920.0 |
| 7 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 150.0 | 150.0 | 1800.0 |
| 8 | Համայնքի ղեկավարի ռեֆերենտ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | |
| | ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | | | |
| 9 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 216.0 | 216.0 | 2592.0 |
| 10 | գլխավոր մասնագետ | 3 | 80.0 | 240.0 | 2880.0 |
| 11 | առաջատար մասնագետ | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| | Քաղաքացիների դիմումների, առաջարկությունների և ընդունելության բաժին | | | | |
| 12 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 13 | գլխավոր մասնագետ | 2 | 80.0 | 160.0 | 1920.0 |
| 14 | առաջատար մասնագետ | 2 | 70.0 | 140.0 | 1680.0 |
| | Բնակարանների հաշվառման և բաշխման բաժին | | | | |
| 15 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 16 | գլխավոր մասնագետ | 4 | 80.0 | 320.0 | 3840.0 |
| 17 | առաջատար մասնագետ | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| 18 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 60.0 | 60.0 | 720.0 |
| | Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին | | | | |
| 19 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 20 | բաժնի պետի տեղակալ | 1 | 130.0 | 130.0 | 1560.0 |
| 21 | գլխավոր մասնագետ | 7 | 80.0 | 560.0 | 6720.0 |
| 22 | առաջատար մասնագետ | 3 | 70.0 | 210.0 | 2520.0 |
| 23 | 1-ին կարգի մասնագետ | 4 | 60.0 | 240.0 | 2880.0 |
| | Ճարտարապետական բաժին | | | | |
| 24 | Բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 25 | բաժնի պետի տեղակալ | 1 | 130.0 | 130.0 | 1560.0 |
| 26 | գլխավոր մասնագետ | 6 | 80.0 | 480.0 | 5760.0 |
| 27 | առաջատար մասնագետ | 4 | 70.0 | 280.0 | 3360.0 |
| 28 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 60.0 | 120.0 | 1440.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Քաղաքաշինության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժին** | | | | |
| 29 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 30 | բաժնի պետի տեղակալ | 1 | 130.0 | 130.0 | 1560.0 |
| 31 | գլխավոր մասնագետ | 4 | 80.0 | 320.0 | 3840.0 |
| 32 | առաջատար մասնագետ | 3 | 70.0 | 210.0 | 2520.0 |
| 33 | 1-ին կարգի մասնագետ | 4 | 60.0 | 240.0 | 2880.0 |
| | **Ֆինանսական բաժին** | | | | |
| 34 | Բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 35 | բաժնի պետի տեղակալ | 2 | 130.0 | 260.0 | 3120.0 |
| 36 | գլխավոր մասնագետ | 6 | 80.0 | 480.0 | 5760.0 |
| 37 | առաջատար մասնագետ | 6 | 70.0 | 420.0 | 5040.0 |
| 38 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 60.0 | 60.0 | 720.0 |
| | **Բյուջեի եկամուտների հաշվառման բաժին** | | | | |
| 39 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 40 | բաժնի պետի տեղակալ | 2 | 130.0 | 260.0 | 3120.0 |
| 41 | գլխավոր մասնագետ | 7 | 80.0 | 560.0 | 6720.0 |
| 42 | գլխավոր մասնագետ-հաշվապահ | 1 | 80.0 | 80.0 | 960.0 |
| 43 | առաջատար մասնագետ | 4 | 70.0 | 280.0 | 3360.0 |
| 44 | 1-ին կարգի մասնագետ | 3 | 60.0 | 180.0 | 2160.0 |
| | **Առևտրի և սպասարկման բաժին** | | | | |
| 45 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 46 | բաժնի պետի տեղակալ | 1 | 130.0 | 130.0 | 1560.0 |
| 47 | գլխավոր մասնագետ | 5 | 80.0 | 400.0 | 4800.0 |
| 48 | առաջատար մասնագետ | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| | **Ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժին** | | | | |
| 49 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 50 | գլխավոր մասնագետ | 2 | 80.0 | 160.0 | 1920.0 |
| 51 | առաջատար մասնագետ | 4 | 70.0 | 280.0 | 3360.0 |
| 52 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 60.0 | 60.0 | 720.0 |
| | **Անօրինական շինությունների և հողազավթումների վերահսկման բաժին** | | | | |
| 53 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 54 | գլխավոր մասնագետ | 1 | 80.0 | 80.0 | 960.0 |
| 55 | առաջատար մասնագետ | 3 | 70.0 | 210.0 | 2520.0 |
| 56 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 60.0 | 60.0 | 720.0 |
| | **Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժին** | | | | |
| 57 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 58 | գլխավոր մասնագետ | 3 | 80.0 | 240.0 | 2880.0 |
| 59 | առաջատար մասնագետ | 4 | 70.0 | 280.0 | 3360.0 |
| | **Կրթության բաժին** | | | | |
| 60 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 61 | գլխավոր մասնագետ | 2 | 80.0 | 160.0 | 1920.0 |
| 62 | առաջատար մասնագետ | 2 | 70.0 | 140.0 | 1680.0 |
| | **Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժին** | | | | |
| 63 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 64 | գլխավոր մասնագետ | 2 | 80.0 | 160.0 | 1920.0 |
| 65 | առաջատար մասնագետ | 2 | 70.0 | 140.0 | 1680.0 |
| | **Տրանսպորտի բաժին** | | | | |
| 66 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 67 | գլխավոր մասնագետ | 1 | 80.0 | 80.0 | 960.0 |
| 68 | առաջատար մասնագետ | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| 69 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 60.0 | 120.0 | 1440.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Իրավաբանական բաժին** | | | | |
| 70 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 71 | գլխավոր մասնագետ | 2 | 80.0 | 160.0 | 1920.0 |
| 72 | առաջատար մասնագետ | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| 73 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 60.0 | 120.0 | 1440.0 |
| | **Անձնակազմի կառավարման բաժին** | | | | |
| 74 | Բաժնի պետ | 1 | 180.0 | 180.0 | 2160.0 |
| 75 | գլխավոր մասնագետ | 2 | 80.0 | 160.0 | 1920.0 |
| 76 | առաջատար մասնագետ | 3 | 70.0 | 210.0 | 2520.0 |
| 77 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 60.0 | 60.0 | 720.0 |
| | **Սոցիալական ծառայությունների Գյումրի-1 տարածքային բաժին** | | | | |
| 78 | Բաժնի պետ | 1 | 117,6 | 117.6 | 1411.2 |
| 79 | բաժնի պետի տեղակալ | 1 | 100,0 | 100.0 | 1200.0 |
| 80 | գլխավոր մասնագետ | 9 | 58,0 | 522.0 | 6264.0 |
| 81 | առաջատար մասնագետ | 2 | 40,0 | 80.0 | 960.0 |
| 82 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 36,0 | 36.0 | 432.0 |
| | **Սոցիալական ծառայությունների Գյումրի-2 տարածքային բաժին** | | | | |
| 83 | Բաժնի պետ | 1 | 117,6 | 117.6 | 1411.2 |
| 84 | բաժնի պետի տեղակալ | 1 | 100,0 | 100.0 | 1200.0 |
| 85 | գլխավոր մասնագետ | 9 | 58,0 | 522.0 | 6264.0 |
| 86 | առաջատար մասնագետ | 2 | 40,0 | 80.0 | 960.0 |
| 87 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 36,0 | 36.0 | 432.0 |
| | **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժին** | | | | |
| 88 | Բաժնի պետ | 1 | 100,529 | 100.529 | 1206.348 |
| 89 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 40,277 | 40.277 | 483.324 |
| 90 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 41,587 | 41.587 | 499.044 |
| 91 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 32,746 | 32.746 | 392.952 |
| 92 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 37,003 | 37.003 | 444.036 |
| | **ՏՆՏԵՍՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | | | |
| 93 | համակարգչի օպերատոր | 1 | 80.0 | 80.0 | 960.0 |
| 94 | համակարգչի օպերատոր | 2 | 70.0 | 140.0 | 1680.0 |
| 95 | համակարգչի օպերատոր | 2 | 65.0 | 130.0 | 1560.0 |
| 96 | համակարգչի օպերատոր | 2 | 60.0 | 120.0 | 1440.0 |
| 97 | համակարգչի օպերատոր | 11 | 50.0 | 550.0 | 6600.0 |
| 98 | համակարգչի օպերատոր | 1 | 40.0 | 40.0 | 480.0 |
| 99 | քաղաքապետի գործավար | 1 | 120.0 | 120.0 | 1440.0 |
| 100 | գործավար | 3 | 70.0 | 210.0 | 2520.0 |
| 101 | գործավար | 2 | 60.0 | 120.0 | 1440.0 |
| 102 | գործավար | 7 | 50.0 | 350.0 | 4200.0 |
| 103 | գրիչ | 1 | 45.0 | 45.0 | 540.0 |
| 104 | գործակալ | 2 | 120.0 | 240.0 | 2880.0 |
| 105 | գործակալ | 6 | 80.0 | 480.0 | 5760.0 |
| 106 | գործակալ | 20 | 70.0 | 1400.0 | 16800.0 |
| 107 | գործակալ | 5 | 60.0 | 300.0 | 3600.0 |
| 108 | գործակալ | 4 | 50.0 | 200.0 | 2400.0 |
| 109 | գործակալ | 15 | գործավարձային | *** | *** |
| 110 | տնտեսվար | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| 111 | մոնտաժող-օպերատոր | 1 | 110.0 | 110.0 | 1320.0 |
| 112 | էլեկտրիկ-մեխանիկ | 1 | 80.0 | 80.0 | 960.0 |
| 113 | հյուսն-էլեկտրիկ | 1 | 45.0 | 45.0 | 540.0 |
| 114 | հյուսն-էլեկտրիկ | 1 | 65.0 | 65.0 | 780.0 |
| 115 | էլեկտրիկ | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 116 | էլեկտրիկ | 2 | 50.0 | 100.0 | 1200.0 |
| 117 | պոմպավար | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| 118 | պոմպավար | 2 | 50.0 | 100.0 | 1200.0 |
| 119 | ավտոմեխանիկ | 1 | 60.0 | 60.0 | 720.0 |
| 120 | վարորդ-մեխանիկ | 1 | 100.0 | 100.0 | 1200.0 |
| 121 | վարորդ-մեխանիկ | 1 | 70.0 | 70.0 | 840.0 |
| 122 | վարորդ | 15 | 80.0 | 1200.0 | 14400.0 |
| 123 | վարորդ | 19 | 70.0 | 1330.0 | 15960.0 |
| 124 | պահակ | 2 | 50.0 | 100.0 | 1200.0 |
| 125 | պահակ | 2 | 45.0 | 90.0 | 1080.0 |
| 126 | պահակ | 5 | 35.0 | 175.0 | 2100.0 |
| 127 | պահակ | 6 | 60.0 | 360.0 | 4320.0 |
| 128 | հավաքարար | 8 | 55.0 | 440.0 | 5280.0 |
| 129 | սանմաքրման գծով բանվորներ | 139 | 55.0 | 7645.0 | 91740.0 |
| 130 | սանմաքրման գծով բարձող բանվորներ | 9 | 70.0 | 630.0 | 7560.0 |
| 131 | սանմաքրման գծով բանվորների բրիգադիր | 17 | 55.0 | 935.0 | 11220.0 |
| 132 | կանաչապատման գծով բանվորներ | 35 | 45.0 | 1575.0 | 18900.0 |
| 133 | կանաչապատման գծով բանվորներ | 12 | 55.0 | 660.0 | 7920.0 |
| 134 | կանաչապատման գծով բանվորների բրիգադիր | 8 | 50.0 | 400.0 | 4800.0 |
| 135 | կանաչապատման գծով բանվորների բրիգադիր | 7 | 70.0 | 490.0 | 5880.0 |
| | **Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը** | **577** | **12352.342** | **38586.342** | **463036.104** |

*ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ* — *Բ.ԱԼԵՔՍԱՆՈՎ*

*ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ -ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ* — *Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 12

# ՈՐՈՇՈՒՄ N 148 - Ա

**ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 231-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010թվականի դեկտեմբերի 16-ի «Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 231-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակներում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Գյումրու քաղաքապետարանի «Շախմատի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում մեկ մարզիչի (Քալաշյան Դավիթ) աշխատավարձի դրույքաչափը սահմանել 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ՝ ուժը կորցրած ճանաչելով նախկին դրույքաչափը ,

2) Գյումրու քաղաքապետարանի «Նոր պարտեզ» մանկապարտեզներ ՀՈԱԿ-ի թիվ 10 մանկապարտեզի հաստիքացուցակում ավելացնել մեկ մերոդիստի հաստիք՝ դրույքաչափը 45000 /քառասունհինգ հազար/ դրամ և թիվ 21 մանկապարտեզի հաստիքացուցակում ավելացնել մեկ մանկավարժի հաստիք՝ դրույքաչափը՝ 45000 /քառասունհինգ հազար/ դրամ,

3) Գյումրու քաղաքապետարանի «Պարերի և սպորտային պարերի դպրոց» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացնել մեկ պարուսույցի հաստիք՝ դրույքաչափը 60000 /վաթսուն հազար/ դրամ:

2. Հանձնարարել ֆինանսական բաժնին /պետ Մ.Գրիգորյան/ բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածներում կատարել համապատասխան փոփոխություններ և այդ մասին տեղյակ պահել Գյումրու տեղական գանձապետական բաժանմունքին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 149 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՆԿԱՐԻՉ ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ /ՎԱԼՄԱՐ/ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վոլոդյա Մամիկոնի Մարգարյանը ծնվել է Գյումրիում, 1948թ. ապրիլի 21-ին:

1966թ. ավարտել է Գյումրիի թիվ 12 միջնակարգ դպրոցը, միաժամանակ ավարտելով Մերկուրովի անվան նկարչական դպրոցը:

1972թ. ավարտել է Երևանի Գեղարվեստա-Թատերական ինստիտուտը: Աշակերտել է Երվանդ Քոչարին:

1970թ-ից մասնակցել է հանրապետական, համամիութենական և արտասահմանյան մի շարք երկրներում կազմակերպված 117 խմբակային ցուցահանդեսների:

Ունեցել է 37 անհատական ցուցահանդես աշխարհի տարբեր երկրներում:

1976թ-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է, իսկ 1994թ-ից՝ միջազգային նկարիչների միության անդամ /UNESCO/:

Կատարել է գրքերի և թատերական ներկայացումների ձևավորումներ:

1970-80թթ Ախուրյանի գեղարվեստի դպրոցի տնօրեն, Հայաստանի նկարիչների միության Գյումրիի բաժանմունքի պատասխանատու քարտուղար:

1980թ-ից Երևանի թիվ 1 արվեստի դպրոցի կերպարվեստի բաժնի վարիչ:

Արժանացել է մի շարք դիպլոմների և մրցանակների՝

2006թ. ՀՀ վաստակավոր նկարչի կոչմանը,

2007թ. «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին» ոսկե մեդալին,

2008թ. ՀՀ Մշակույթի նախարարության ոսկե մեդալին:

Նկարչի բուռն ստեղծագործական գործունեությունը պսակվել է 40-ից ավել անհատական և 120 խմբակային ցուցահանդեսներով:

Վալմարի ստեղծագործությունները ցուցադրվում են Հայաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Ֆրանսիայի պատկերասրահներում և թանգարաններում, ինչպես նաև բազմաթիվ ստեղծագործություններ գտնվում են մի շարք երկրների մասնավոր հավաքածուներում:

Վերջին տարիներին Վալմարը սերտորեն համագործակցում է տարբեր երկրներում գտնվող գալերեաների հետ:

Հաշվի առնելով մեծ վաստակը հայ գեղանկարչության զարգացման և հայ մշակույթը միջազգային արենայում ներկայացնելու գործում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գյումրու ավագանու 2003թվականի սեպտեմբերի 11-ի ««Վարպետ» կրծքանշանով պարգևատրելու կարգը հաստատելու մասին» N 5 որոշումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ, Միջազգային նկարիչների միության անդամ **Վոլոդյա Մարգարյանին** /ՎԱԼՄԱՐ/ պարգևատրել պատվավոր «ՎԱՐՊԵՏ» ոսկյա կրծքանշանով:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | | |
|---|---|---|
| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 12

« 23 » սեպտեմբերի 2011թ.
ք.Գյումրի

## ՈՐՈՇՈՒՄ N 150 - Ա

**ԵՐԳԻՉ ԱԼԲԵՐՏ /ԱԼԻԿ/ ԳՅՈՒՆԱՇՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ալբերտ /Ալիկ/ Գյունաշյանը ծնվել է 1954թվականի դեկտեմբերի 8-ին, Լենինական քաղաքում: Երգել սկսել է 1962թ.-ից, Սևոյանի անվան երկաթուղայինների մշակույթի պալատում: Տասը տարեկանում մասնակցել է փառատոնի և ստացել ոսկե մեդալ: Արժանացել է նաև Մշակույթի նախարարության բարձր պարգևի՝ «Ոսկե մեդալի», 2008թ-ին՝ «Ոսկե մուշուրբա» մրցանակաբաշխության «Տարվա լավագույն գյումրեցի» կոչման, Լոս Անջելեսում՝ «Լենինականցի Ալիկ վարպետ» պատվոգրի և այլ պարգևների:

Գյումրեցի երգիչ Ալիկ Գյունաշյանը ժողովրդին հայտնի է բազմաթիվ երգերով:

Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս հայ գուսանական արվեստի Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս հայ գուսանական արվեստի զարգացման և տարածման գործում ունեցած մեծ ներդրումների համար, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գյումրու ավագանու 2003թվականի սեպտեմբերի 11-ի ««Վարպետ» կրծքանշանով պարգևատրելու կարգը հաստատելու մասին» N 5 որոշումը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Երգիչ Ալբերտ /Ալիկ/ Գյունաշյանին պարգևատրել պատվավոր «ՎԱՐՊԵՏ» ոսկյա կրծքանշանով:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| Հ.ՊՈՂՈՍՅԱՆ | ՉԿԱ | ՉԿԱ |
| Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ | | |
| Գ.ԱԴԱՄՅԱՆ | | |
| Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ | | |
| Մ.ՍԱՀԱԿՅԱՆ | | |
| Տ.ՓԱՆՈՍՅԱՆ | | |
| Ա.ԲԱԴԵՅԱՆ | | |
| Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | |

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 23 » սեպտեմբերի 2011թ. Արձանագրություն N 12

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 151-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒՀԻ ԺԵՆՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ժենյա Սեդրակի Ավետիսյանը ծնվել է Երևանում 1941 թ. հուլիսի 16-ին:

Ծնողները Մեծ եղեռնի հետևանքով Կարսից գաղթել են Գյումրի-Ալեքսանդրապոլ, որտեղ էլ ամուսնացել են:

Հայրը լինելով զինվորական, մեկնել է Մեծ հայրենականի ռազմաճակատ և 1942 թ. զոհվել Կերչում: Ընտանիքն այնուհետև տեղափոխվել է Երևան:

1947 թ. ընդունվել է Տիմոշենկոյի անվան 39-րդ դպրոցը, որը 1958 թ. ավարտելով՝ ընդունվել է Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտ՝ համբավավոր դերասան և հմուտ մանկավարժ Արմեն Գուլակյանի ղեկավարած դերասանական բաժինը:

1962 թ. ավարտել է ինստիտուտը՝ ստանալով դրամատիկ թատրոնի դերասանուհու որակավորում: Նույն տարին ականավոր բեմադրիչ Վարդան Աճեմյանի հրավերով աշխատանքի է անցել Երևանի Գ.Սունդուկյանի անվան պետական դրամատիկական մայր թատրոն, որտեղ էլ աշխատում է մինչև օրս՝ շուրջ 50 տարի: Մարմնավորել է տարբեր կերպարներ հայ, ռուս, եվրոպական և համաշխարհային այլ դասական ու ժամանակակից հեղինակների պիեսների ներկայացումներում, ծավալել բեղուն բեմական գործունեություն:

Թատրոնի աշխատանքին զուգահեռ նկարահանվել է մի շարք գեղարվեստական ֆիլմերում, կրկնօրինակել հազարի հասնող կինոնկարներ: Ներկայացումներով կամ առանձին համերգներով շրջագայել է արտասահմանյան բազմաթիվ երկրներում՝ Բուլղարիայում, Չեխոսլովակիայում, Թուրքիայում, Ամերիկայում, Կանադայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Կիպրոսում, Սիրիայում, Լիբանանում, Հորդանանում, ինչպես նաև խորհրդային նախկին հանրապետությունների հայաշատ քաղաքներում: Ամենուր տարածել է հայ բեմարվեստը, հնչեցրել հայոց արևահամ բառն ու բանը, նպաստել Սփյուռքում հայապահպանության գործին: Բեմական գործունեությանը զուգահեռել է ասմունքը. հայ դասական ու ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունները ներկայացրել թե՛ մայրաքաղաքի, թե՛ հանրապետության մյուս քաղաքների հիմնարկ-ձեռնարկություններում, զորամասերում, մարզերում, բուհերում ու դպրոցներում: Գրեթե ամեն տարի Թբիլիսիում մասնակցել է սայաթնովյան փառատոնին: 2007 թ. ԱՄՆ-ի Գլենդելի քաղաքապետարանի հրավերով խաղացել է Ա.Աղասարյանի «Փրկեք մեր հոգիները» ներկայացման մեջ խաղացել է մոր դերը, և Սփյուռքում հայապահպանության նպաստելու համար արժանացել է քաղաքապետարանի հատուկ պատվոգրին:

Միշտ եղել է ժողովրդի հետ, եռանդով մասնակցել հանրապետության մշակութային ու հանրային կյանքին, Հայաստան– Վրաստան և Հայաստան– Լիբանան հասարակական կազմակերպությունների գործունեությանը, ընտրվել նրանց վարչության կազմում: Երկրաշարժի ծանր ժամանակներում համերգներով ու ներկայացումներով հանդես է եկել աղետյալների առջև ու հուսադրել նրանց, իսկ արցախյան ազատագրական պատերազմի շրջանում իր ելույթներով քաջալերել հայ զինվորներին ու մղել սխրանքների՝ այդպես նպաստելով մեր համազգային մեծ հաղթանակին:

Կազմակերպել է Սայաթ-Նովային, Ավ. Իսահակյանին, Ս. Կապուտիկյանին, Պ. Սևակին նվիրված գրական համերգներ, թողարկել է չորս տեսաերիզ և բազմաթիվ ձայնասկավառակներ:

Հրատարակվել են իր բեմական գործունեությունը լուսաբանող «Ժենյա Ավետիսյան» - ալբոմ-ժողովածուն և Լևոն Մութաֆյանի «Ժենյա Ավետիսյան» մենագրությունը:

Արժանացել է կառավարական բարձր պարգևների, զանազան պատվոգրերի ու շնորհակալագրերի: 1982 թ. նրան շնորհվել է վաստակավոր արտիստի, իսկ 2004 թ` Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի կոչում: 2010թ. «Զորավար Անդրանիկ» բարեգործական հիմնադրամի կողմից պարգևատրվել է «Զորավար Անդրանիկ» հուշամեդալով: 2011 թ. արժանացել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի «Ոսկե հուշամեդալին»:

Հայ և համաշխարհային թատրոնի և կինոարվեստի բնագավառում ցուցաբերած բեղուն գործունեության, հայ բեմարվեստը, հայոց արևահամ բառն ու բանը Սփյուռքում հայապահպանությանը նպաստելու գործում ունեցած մեծ ավանդի համար, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գյումրու ավագանու 2003թվականի սեպտեմբերի 11-ի ««Վարպետ» կոչման շնորհման կարգը պարգևատրելու կարգը հաստատելու մասին» N 5 որոշումը`

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

ՀՀ ժողովրդական արտիստուհի Ժենյա Ավետիսյանին պարգևատրել պատվավոր «ՎԱՐՊԵՏ» ոսկյա կրծքանշանով:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ`

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ` |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Տ.ՓԱՆՈՍՅԱՆ

Ա.ԲԱԴԵՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

23 սեպտեմբերի 2011թ.
ք. Գյումրի